


Ուղղանկյունանիստ





Ուղղանկյունանիստը կազմված է 6 ուղղանկյուններից՝ նիստերից:

Ուղղանկյունանիստի նիստերի կողմերը կոչվում են ուղղանկյունանիստի կողեր, իսկ նիստերի գագաթները՝ ուղղանկյունանիստի գագաթներ:

Ուղղանկյունանիստի հանդիպակաց նիստերը իրար հավասար են:
Ուղղանկյունանիստն ունի 12 կող, 8 գագաթ ու 6 նիստ:

Ուղղանկյունանիստի չափումներն են՝ ուղղանկյունանիստի լայնությունը, երկարությունը և բարձրությունը:

Այն ուղղանկյունանիստը, որի բոլոր կողմերը իրար հավասար են, կոչվում է խորանարդ:



Խորանարդը կազմաված է 6 հավասար քառակուսիներից՝ նիստերից:

Ուղղանկյունանիստի ձև ունենալու բազմահարկ շենքերը, դասասենյակը, ակվարիումը:

Առաջադրանքներ

1. Քանի՞ կող, գագաթ, նիստ ունի ուղղանկյունանիստը:
2. Հաշվեք ուղղանկյունանիստի ծավալը, եթե նրա չափումներն են՝ 5դմ, 7դմ, 8դմ:
3. Հաշվեք ուղղանկյունանիստի ծավալը, եթե նրա չափումներն են՝ 2 դմ, 12 սմ, 10 սմ:
4. Հաշվեք 6 դմ կող ունեցող խորանադի ծավալը:
5. Հաշվեք 5 դմ կող ունեցող խորանադի ծավալը:
6. Հաշվեք ուղղանկյունանիստ ծավալը, եթե նրա չափումներն են՝ 15սմ, 16սմ, 17 սմ:
7. Ո՞ր ուղղանկյունանիստի ծավալն է ավելի մեծ, որն ունի 7սմ երկարություն, 5սմ լայնություն և 10սմ բարձրություն, թե՞ այն ուղղանկյունանիստ մակերևույթի մակերեսը, որն ունի 10սմ երկարություն, 7սմ լայնություն և 5սմ բարձրություն:
8. Հաշվեք ուղղանկյունանիստ ծավալը, եթե նրա չափումներն են՝ 5 դմ, 4 դմ, 6 դմ:
9. Հաշվեք ուղղանկյունանիստ ծավալը, եթե նրա չափումներն են՝ 3 դմ, 6 սմ, 10 սմ:
10. Հաշվեք 7 դմ կող ունեցող խորանադի ծավալը:

